

Գերատեսուչ Մաթ Հիլը ներկայացնում է ԲԴՄՇ-ի «Բազմազանություն, արդարություն և ներառում» կայքը

Մաթ Հիլի ներածական խոսքը կայքի տեսանյութի վերաբերյալ

Բարև ձեզ, ես Մաթ Հիլն եմ՝ Բրբենքի Դայրոցական Միացյալ Շրջանի գերատեսուչը: Ես ցանկանում եմ ողջունել ձեզ մեր բոլորովին նոր բազմազանության, արդարության և ներառման կայքում: Այս կայքում, դուք կկարողանաք գտնել ռեսուրսներ, լավագույն փորձեր, մեր օրենքների կարևորագույն կետերը և հակառասմատական հայտարարությունն ու թարմացումները, որոնք տեղի են ունենում Բրբենքի Միացյալ շրջանում:

Բազմազանության, արդարության և ներառման մեր կոմիտեն կենտրոնանում է կարևոր 4 ոլորտների ուսումնասիրության վրա: Առաջինը մեր օրենքներն են, երկրորդը՝ դասավանդումը, որը ներառում է մեր դպրոցների դասագրքերը, ուսումը և մանկավարչությունը: Երրորդը մեր աշակերտների սոցիալ հուզական աջակցությունն է: Չորրորդը ներգրավվածությունն է, որը մեր կայքի հիմնական տարրն է:

Այս աշխատանքի հիմքում է ընկած մեր անցյալը և տարբեր հեռանկարներ տեսնելու մեր ապագան: Մեզանից յուրաքանչյուրն ունի իր հաջողությունների և դժվարությունների յուրօրինակ պատմություն: Մենք պետք է լայն տարածք ստեղծենք՝ հաղորդակցվելու համար: Եվ ահա այսօր, ես ցանկանում եմ սկսել այն իմ անձնական ճանապարհով և մտորումներով:

Մեծանալիս, ես զգում էի, որ իմ ընտանիքն ապրում է ամերիկյան երազանքը: Իմ ծնողները մեծացել են աշխատավորի ընտանիքում և սովորեցրին ինձ ամերիկյան երազանքի մասին: Բայց իմ ճամփան անցավ կրթության բնագավառով և սոցիալական արդարության իմ դոկտորական ուսումնասիրությունների շնորհիվ և կյանքին նայեցի ոչ անյպես ինչպես մյուսները: Ամերիկյան երազանքը նույնը չէ բոլորի համար: Կան համակարգային խոչընդոտներ, օրենքներ, կանոնակարգեր, գործընթացներ, որոնք թույլ չեն տալիս մեր այլազգ աշակերտներին և նրանց ընտանիքներին հասնել հաջողության: Մենք պետք է լսենք նրանց պատմությունը: Մենք պետք է կիսվենք մեր սեփական պատմություններով և տեսնենք, թե ինչպես են դրանք տարբերվում իրարից: Այս պատմությունները դժվար կլինեն լսել, դրանք կլինեն հուզական և դժվար բնույթի:

Բարի գալուստ մեր կայքը: Խնդրում եմ ձեռք մեկնել, մասնակցել և շարունակել խոսակցությունը:

Շնորհակալություն